այդ դիակին վրայ ձգուած ոտքին և ձեռքին հետ, տեսնուեցաւ որ չապիկի թեւերն ու գուլպաները ճիշդ ու ճիշդ թեւերն ու գտնուած թեւին ու ոտքը յարմարին գտնուած չապիկի ու գուլպային վրայ մնացած հետ. նոյն իսկ գուլպայի մասերուն հետ. նոյն խոյ դուլպաները հին էին և կարկտանները ճիշդ նման։ Այս քննութեամբ կարծուեցաւ որ գլխատեալ պէս հասկցուեցաւ որ գլխատուած թեւն ու ոտքերը կը վերաբերին վերոյիշեալ դիակին, և միւս դիակներուն մէջ աւելորդ ոտք և ձեռք չգտնուեցաւ։ Նոյն թուականով և 27 թիւ տեղեկագիր մը, որ տրուած էր Համիտիյէ Մանկանց հիւանդանոցէն, կ'ըսէր թէ քննուեցաւ կառքով հոն փոխադրուած դիակ մը, միջահասակ, թխահագոյն, անսեւ մազերով և պեխերով, 35 տարու, անունը և արհեստը անծանօթ, բայց որովհետեւ թլփատուած էր, յայտնի եղաւ թէ իսլամի մըն էր նոյն դիակը։ Ձախ ուսին վրայ կար վէրք մը կար մէկ ք…

…

# ԲԱՐԻԶԻ ՊՈՐՍԱՆ
BOURSE DE PARIS

20 Դեկտեմբեր 1905

| | | |
|---|---|---|
| Ֆրանս. 3% | (3% Français) | 98 75 |
| Օսմ. Միացեալ | (P. Nv. Unif.) | 90 70 |
| Երկաթուղի | (Lots Turcs) | 135 — |
| Պանք Օթթ. | (Banque Ott.) | 598 — |
| Րէժի | (Tab. Turcs) | 373 — |
| Թրանսվալ | (Transvaal) | 57 — |
| Սպանիական | | 91 80 |
| Ռուսական 3% | | 65 90 |

# ՆԵՐՔԻՆ

ԿԱՅՍ. ՀՈԳԱԾՈՒԹԻՒՆ.— Տպագրական Տնօրէնի Վսեմ. Բէյմալ պէյի …

…

„համար ի՛նչ պիտի ըսէ։ Ժորիս պատասխանեց. — «Այո՛, ատոնք մեծատակար լրագիրներ են. գաղափար կազմելու համար երեք տարիէ ի վեր բաժանորդ գրուած եմ այդ լրագրին։»

(Շարունակելի)

## ՊԱՏՐԻԱՐՔԱՐԱՆԷՆ

## ՌՈԴՈՍԹՈՅԻ ԱՌԱՋՆՈՐԴՈՒԹԻՒՆԸ

### ԼԱԽԱԳՈՅՆ ՈՐՈՇՈՒՄ ՄԸ

Ռոտոսթոյի առաջնորդ Վահրիճ վրդ.ի մասին հասած պաշտօնագիր մը, որ նոյնին հրաժարեցումը և Պոլիս կանչուիլը կը յանձնարարէր, երէկ կարդացուեցաւ Խառն Ժողովին մէջ և որոշուեցաւ Պոլիս կանչել Վահրիճ վրդ.ը, որ մէկ քանի օրէն մայրաքաղաքս կը հասնի։

×

Ինչպէս կը տեղեկուի Ռոտոսթոյի Առաջնորդ Տ. Վահրիճ վարդապետ Պոլիս կը կանչուի վերջապէս Պատրիարքարանի …

…

կութեան թէ իր վարձակալութեան պայմանաժամը կ'աւարտի առաջիկայ 1/14 Յունվարին, հետեւաբար որոշած է զգալի զեղչ մը ընել նաեւ արդէն իսկ շատ զեղչուած գիներուն վրայ, այնպէս որ կարելի ըլլայ որոշեալ պայմանաժամին մէջ ձեռքէ հանել մեծաքանակ մթերքը կիներու և տղոց հանդերձեղէններուն, ճերմակեղէններու, ևն.։ Հազուադէպ առիթ մըն է այս ամէն անոնց, որոնք կ'ուզեն խիստ բացառիկ գինով մը գնել ընտիր ապրանքներ։

## ՕՐՈՒԱՆ ԴԷՊՔԵՐԸ

ՍՃԻ՞Ր ԹԷ ԱՆՁՆԱՍՊԱՆՈՒԹԻՒՆ. — Էէնի-քէօյ, Այ-Նիքօլա թաղը բնակող Յակոբ աղա Յովհաննէսեան, նախընթաց գիշեր իր տան մէջ անձնասպան եղաւ բէվոլվէրի հարուածով մը։ Ընտանիքը պայթման ձայնին վրայ սենեակ վազեց, բայց դուռը կղպուած էր։ Կոտրեցին, ներս մտան և տեսան որ Յակոբ աղա անշունչ փռուած էր արեան լճակի մը մէջ։ Անձնասպանը 60 տարու էր։ Ոստիկանութիւնը կասկածելով թէ մի՛ գուցէ դէպքը ոճիր մըն է, այսօր դիազննութիւն մը կա…

…

## ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

…

